

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 40/8

ք.Երևան

10 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

22.03.2018թ. «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) ստացել է N39/2018/Փ ծանուցագիրը, որով առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել հայտարարություն: Ըստ ծանուցագրի. «օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ն մասի 5-րդ կետի համաձայն՝ 22.02.2018թ. մինչև սույն հարկային տարվա ավարտը կհամարվեք ավելաված արժեքի հարկ վճարող»:

Ընկերության հիմնադիր Ա.Ամիրխանյանը 22.02.2018թ. գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր և 24.02.2018թ. ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, իսկ 29.03.2018թ. հայտարարություն 31.03.2018թ. Ա/Ձ Ա.Ամիրխանյանի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:

Միաժամանակ, Ա/Ձ Ա.Ամիրխանյանը գրանցվելու օրվանից մինչև դադարեցման պահը որպես անհատ ձեռնարկատեր որևէ տեսակի գործունեություն չի իրականացրել:

«ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ-ն 15.01.2018թ. ներկայացրել է շրանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Բողոքաբերը խնդրում է հաշվի առնել, որ կատարվածը թյուրիմացություն է և թույլատրել «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ-ին շարունակել գործունեությունը, որպես շրջանառության հարկ վճարող մինչև հարկային տարվա ավարտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Հարկային մարմնի կողմից «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ-ին ուղարկվել է N39/2018/Փ ծանուցագիրը, որով տեղեկացվել է, որ ընկերության կանոնադրական կապիտալում 28.02.2007թ.-ից 100% փայաբաժին ունեցող Սելմիկ Վազրիկի Ամիրխանյանը միաժամանակ 22.02.2018թ. հանդիսանում է անհատ ձեռնարկատեր:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված դրույթներն ընկերությանն առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը, որի արդյունքում 22.02.2018թ. մինչև հարկային տարվա ավարտն ընկերությունը կհամարվի ավելացված արժեքի հարկ վճարող:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձիք համարվում են փոխկապակցված, եթե ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական

(բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը):

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող չեն կարող համարվել Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը: Համաձայն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու հիմքերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

Քննարկվող դեպքում «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 28.02.2007թ.-ից 100% փայաբաժին ունեցող Սելմիկ Վազրիկի Ամիրխանյանը միաժամանակ 22.02.2018թ. հանդիսանում է անհատ ձեռնարկատեր:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով ընկերությանն առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

Հանձնաժողովը գտնում է, որ գործում առկա փաստական հանգամանքների պայմաններում «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ-ն 2018թ. ընթացքում չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ՆԱԶԼՈՒՍՇԻՆ» ՍՊԸ դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

